ՕՐԱԿԱՐԳ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի ապրիլի 18-ի, ժամը 14:00-ի նիստի

1. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի մայիսի 13-ի «Գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու ու գիտական խորհրդի 2019 թվականի սեպտեմբերի 6-ի N 1 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 10 - 2 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:**

   Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

   Առաջարկվում է ուսումնական բաժնի նախկին պետ Գայանե Միհրանի Մերդինյանի փոխարեն գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի կազմում ընդգրկել ուսումնական բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Արսեն Արամի Պետրոսյանին:**

2. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2023-2027 թթ. զարգացման ռազմավարության գործողությունների ծրագիրը հաստատելու մասին:**

   Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

3. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության էթիկայի (բարեվարքության) կանոնակարգը հաստատելու մասին:**

   Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

4. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին:**

   Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

5. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մակրոէկոնոմիայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 22.02.2023, N 33 (7924)):

   Զեկուցողներ՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ **Ա.Հ.Սարգսյան**:

1) **Սոս Վիրաբի Խաչիկյան՝** մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

Հավակնորդի գործը քննարկվել և երաշխավորվել է գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2023 թվականի ապրիլի 6-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 14):

6. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 22.02.2023, N 33 (7924)):

Զեկուցողներ՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ **Ա.Հ.Սարգսյան**:

1) **Աղավնի Գրիգորի Հակոբյան՝** ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

Հավակնորդի գործը քննարկվել և երաշխավորվել է գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2023 թվականի ապրիլի 6-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 14):

7. **Դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին:**

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ **Ա.Հ.Սարգսյան**:

1) **Տաթևիկ Արտաշեսի Մկրտչյան՝** տնտեսագիտության տեսության ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

2) **Անուշ Լավրենտի Թումանյան՝** տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

Հայցորդների գործերը քննարկվել և երաշխավորվել են գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2023 թվականի ապրիլի 6-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 14):

8. **2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին:**

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

9. **Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների ձևավորման մասին:**

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

10. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգայնացման քաղաքականությունը և ռազմավարությունը հաստատելու մասին:**

Զեկուցող՝ արտաքին կապերի դեպարտամենտի տնօրեն **Լ.Մ.Դանիելյան**:

11. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգը հաստատելու մասին:**

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան:**

12. **2023-2024 ուսումնական տարվանից մագիստրոսական կրթական ծրագրերով ակադեմիկական խմբերի ձեվավորման և ակադեմիական կազմի ներգրավման սկզբունքները սահմանելու և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին:**

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան:**

13. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հրատարակչական կարիքների համար լեզուների ամբիոնին արտաժամյա բեռնվածություն սահմանելու և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2022 թվականի հուլիսի 1-ի N 13 - 12 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:**

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան:**

14. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանից հեռացված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված

«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 12-րդ կետով լիցենզիայով սահմանված տեղերի քանակից ավելի տեղին հրամանագրելու համար ուսանողական իրավունքները վերականգնող ուսանող **Արեգ Գարեգինի Կարապետյանին** ուսման վարձը վճարելու թույլտվություն տալու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան:**

15. **«Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներքին և արտաքին շահառուներին 2023 թ. առաջարկված հետազոտական ուղղությունների և նրանց կողմից ամրագրված հետազոտական թեմաների ցանկը հաստատելու մասին:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան:**

Հետազոտական թեմաները քննարկվել և հաստատվել են գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի՝ 2023 թվականի ապրիլի 14-ի, ժամը 15:30-ի նիստում (արձանագրություն N 2):

16. **Ընթացիկ հարցեր:**

1) **Ատենախոսության թեմա և գիտական ղեկավար հաստատելու և ատենախոսությունների թեմաներ վերահաստատելու մասին:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Ատենախոսությունների թեմաները քննարկվել, հաստատվել և վերահաստատվել են են գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի՝ 2023 թվականի ապրիլի 14-ի, ժամը 15:30-ի նիստում (արձանագրություն N 2):

2) **2022 թվականին «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից հայտարարված մրցութային թեմաների շրջանակում իրականացված հետազոտություններով մենագրությունների հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Մենագրությունները երաշխավորվել են հրատարակության գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի՝ 2023 թվականի ապրիլի 14-ի, ժամը 15:30-ի նիստում (արձանագրություն N 2):

Գիտական քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**
2023 թ. ապրիլի 18
Երևան